„Памятная Книжка Эриванской Губерніи“, խմբագրութեամբ Երևանի նահանգապետի դիւանի կառավարիչ պ. Մարչենկոի։

—

Այս հրատարակութիւնը Երևանի նահանգի տնտեսական խնդիրներով զբաղուողների համար կազմելով մի գեղեցիկ աղբիւր իր մի քանի մասերով գերազանցում է անցեալ 1903 թւի հրատարակութիւնից։

Բազմաթիւ և բազմակողմանի վիճակագրական տեղեկութիւնների շարքում, այս հրատարակութեան մէջ, առանձապէս իրանց վրայ ուշադրութիւն են դարձնում 1902 թւի ամբողջ նահանգի ընիկ և ժամանակաւոր ապրող ազգաբնակութեան վիճակագրութիւնը վերցնելով իւրաքանչիւր ազգութեան և դաւանութեան պատկանող ժողովուրդներին զատ-զատ, մի բան, որը բաց էր թողնուած առաջին հրատարակութեան մէջ 1886 և 1897 թւերի վիճակագրութիւնների նկատմամբ։ Ամուսնացածների, ծնուած և մեռածների, սպանութիւններից և այլ պատահական երևոյթներից առաջացած մահուան դէպքերի, յանցանքների և դրա հետ կապուած յանցաւոր ճանաչուած ու մեղադրուածների վիճակագրութիւնները դաւանաբանական կարգով և վերջապէս գիւղատնտեսական կարիքների խնդրով զբաղուած նահանգական կոմիտեի և ինժեներ գիդրաւլիկ պ. Տաղլովսկու մի ընդարձակ ուսումնասիրութիւնը, որը բռնելով հրատարակութեան վերջին 65 երեսները շօշափում է գիւղատնտեսական պարապմունքների և ազգաբնակութեան կարիքների խնդիրը և մանաւանդ ոռոգման հարցը, որը այժմ նահանգի համար ունի ամենաէական և կարևոր նշանակութիւն։

Մի փոքր ծանօթութիւն տանք ազգաբնակութեան թւի, ծնունդների ու մահերի և յանցանքների ու յանցագործների մասին, որոնք լինելով պաշտօնական տեղեկութիւններ կը դան լոյս սփռելու այն մի կարգի հայակեր հրապարակախօսների ամբաստանութիւնների վրայ, որոնք շուտ-շուտ լոյս են տեսնում մի կարգի թերթերի մէջ նպատակ ունենալով հայերին հռչակել որպէս ոչ կուլտուրական և կեղեքող տարր։

Նախ թերթենք ազգաբնակութեան քանակի աղիւսակները։

1902 թւին Երևանի նահանգում զանազան ազգութիւններին պատկանող ազգաբնակութեան քանակը հետևեալ պատկերը էր կրում։

Մշտական բնակիչներ

Ազգութիւններ	Մարդ	Կին	Ընդամենը
Հայեր	255,896	235,740	491,636
Թուրքեր	173.120	150,705	323.825
Քրդեր	23,166	20,295	43,461
Ռուսներ	3,390	3,265	6,655
Զանազան	1,495	1.272	2.767
Ընդամենը	457,067	411,277	868,344

Ժամանակաւոր բնակիչներ

Ազգութիւններ	Մարդ	Կին	Ընդամենը
Հայեր	10,127	8,222	18,349
Թուրքեր	9,800	7,685	17,485
Քրդեր	2,010	1,883	3,893
Ռուսներ	2,920	2,441	5,361
Զանազան	1,694	1,370	3,064
Ընդամենը	26,551	21,601	48,152

Ուրեմն 1902 թիւին Երևանի նահանգում մշտական և ժամանակաւոր ապրողների ընդհանուր թիւը եղել է՝

Ազգութիւններ	Մարդ	Կին	Ընդամենը	%
Հայեր	266,023	243,962	509,985	55.$_6$
Թուրքեր	182,920	158,390	341,310	37.$_2$
Քրդեր	25,176	22,178	47,354	05,$_2$
Ռուսներ	6,310	5,706	12,016	01,$_3$
Զանազան	3,189	2,642	5,831	00,$_7$
Ընդամենը	483,618	432,878	916,496	100

Այսպիսով հայերի թիւը 1902 թիւին ամբողջ նահանգում եղել է 509,985, որը կազմում է ազգաբնակութեան մի պատկառելի թիւը այն է 55,$_6$%։

Այդ նոյն թիւին ամուսնացածների ծնունդների և մահերի թիւը արտայայտուել է այս կերպ.

Դասակարգիներ	Ամուսնութիւն	Ծնունդ	Մահ	Արդիւնք
Լուսաւորչականներ	4,048	20.534	10,499	10,035
Ջիաներ	2,885	9,513	5,590	3,923
Սիաններ	253	1,260	914	346
Ցունադաւաններ	82	505	250	255
Կաթոլիկներ	83	411	169	242
Եզիդիներ	86	346	211	135
Աղանդաւորներ	57	349	145	204
Հրէաներ	7	25	17	8
Ընդամենը	7,501	32,943	17,795	15,148

Առաջ բերելով այս թւերը շատ հետաքրքիր էր մեզ իմանալ նահանգի ազգաբնակութեան բնական աճման չափը ընդհանրապէս և հայերին մասնաւորապէս։

Ամբողջ նահանգի 916,496 հոգուց բաղկացած ազգաբնակութիւնը տուել է 1902 թւին 7,501 ամուսնութիւն, 32,942 ծնունդ, 17,795 մահ և 15,148 արդիւնք, որ և 1,000 հոգուն գալիս է 7 ամուսնութիւն, $35,_{9}$ ծնունդ, $19,_{4}$ մահ և $16,_{6}$ արդիւնք։ Այն ինչ 509,985 հոգուց բաղկացած հայ ազգաբնակութիւնը տուել է 4131 ամուսնութիւն, 20,945 ծնունդ, 10,668 մահ և 10,277 արդիւնք [1]) որ և 1000 հոգուն գալիս է 8 ամուսնութիւն, 41 ծնունդ, $20,_{9}$ մահ և $20,_{1}$ արդիւնք։ Ուրեմն բնական աճումն ընդհանուր ազգաբնակութեան նկատմամբ եղել $01,_{65}$ % իսկ հայերին առանձնապէս $02,_{09}$ %, մի մխիթարական երևոյթ, որը ցոյց է տալիս հայ ժողովրդի ընտանեկան, ամուսնական, առողջապահական նորմալ կարգերը։

Այժմ դիմելով նոյն պաշտօնական հրատարակութեան՝ իմանում ենք որ Երևանի նահանգի 491,636 բնիկ հայ ազգաբնակութիւնը գաւառների և քաղաքների մէջ բաժանուած է եղել հետևեալ կերպ։

Գաւառներ	Ընդհանուրը	Հայերը
Երևանի	121,809	45,624
Սուրմալուի	90,628	28,638
Էջմիածնի	133,659	86,069
Ալէքսանդրօպ.	147,731	134,004
Նոր-Բայազէտ.	126.884	82,815
Շարուր-Դար."	79,326	22,473
Նախիջևանի	98,926	40.974
Ընդամենը	798.963	440,597

Քաղաքներ	Ընդհանուրը	Հայերը
Երևան	15,672	7,336
Ալէքսանդրօպ.	33,879	32,320
Նոր-Բայազէտ	9,438	9,267
Նախիջևան	6,142	1,757
Օրդուբադ	4,250	359
Ընդամենը	69,381	51,039

Ինչ ենք ստանում, այն, որ Երևանի նահանգի 491,636 բնիկ հայ ժողովրդի բացարձակ մեծամասնութիւնը այն է 440,597 հոգի կամ 90 %-ը կազմում է, բուն գիւղական երկրագործ—մշակ դասակարգ, որը ապրում է իր ճակատի քրտինքով, իր բազուկների աշխատանքով, իր մատերով փափկացրած ու խնամած հողի պտղաբերութեամբ, որի շնորհիւ Երևանի նահանգը այսօր հասել է մի ծաղկած դրութեան։ Իսկ այս մի ան-

---

[1]) Այս թւերը առաջ են բերուած լուսաւորչականներին և կաթոլիկներին միասին այն հիման վրայ, որ նահանգում եղող կաթոլիկները հայեր են։

հերքելի ճշմարտութիւն է, ճշմարտութիւն պաշտօնական թուերի վրայ հիմնուած։

Իսկ նրա մի չնչին մասը միմիայն, այն է 51,039 հոգին կամ 10 %-ը ապրում է քաղաքներում, որոնց վերաբերեալ այնուամենայնիւ ասելիք ունենք, այդ այն է, որ քաղաքներում ապրող հայ ազգաբնակութեան մեծ մասը դարձեալ պարապում է երկրագործութեամբ և արհեստներով, օրինակ Նոր-Բայազէտը իր 9,267 բնակիչներով և Ալեքսանդրոպոլը 32,320։ Այնպէս որ ճշմարտութեան դէմ մեղանչած չենք լինի, եթէ ասենք հայ ժողովրդի 95%-ը կազմում է զուտ գիւղական տարր։

Իւրաքանչիւր դաւանութեան պատկանող յանցագործների մասին վիճակագրութիւններ առաջ են բերուած երկու դէպքերում միմիայն, մէկ նահանգական և երկրորդ գիւղական դատարանների դատավարութիւններից։

1902 թւի ընթացքում գիւղական դատարանները քննել և յանցաւոր են ճանաչել՝ համապատասխան պատիժներ սահմանելով իւրաքանչիւրին՝ 885 հոգի, որոնցից մահմէդականներ 525 և քրիստոնեաներ 360։ Այլ խօսքով յանցագործների 60 %-ը պատկանում են մահմէդական տարրին, իսկ մնացեալ 40 % միմիայն քրիստոնեաներին։ Այս բաւական չէ, պէտք է բերել մի այլ հաշիւ ևս։ Թուրք և քիւրդ գիւղական տարրը միասին կամ մահմէդականներ հաշուում են 306,473+43,461=349,934։ Այդ քանակութիւնը տուել է յանցագործների 525 դէպք կամ 1000 հոգուն 01,-ը մինչդեռ 440,597 հայը տուել է 360 դէպք կամ 1000 հոգուն 00,-ը, եթէ մինչև անգամ այդ 360 դէպքն էլ հայերին վերագրելու լինենք։

Նահանգական դատարանը քննել և յանցաւոր է ճանաչել, համապատասխան պատիժ սահմանելով իւրաքանչիւրին, 350 մարդ, որոնցից 194-ը մեղադրուել են սպանութեան մէջ, 77-ը գողութեան և մնացեալը զանազան յանցանքների մէջ։ Այդ 350 յանցագործներից 238-ը մահմէդականներ են և 112-ը միմիայն քրիստոնեաներ. եթէ այդ 112 յանցաւորները հաշուելու լինենք հայեր, կը տեսնենք, որ 367,286 մահմէդական տարրը տուել է 238 յանցագործներ կամ 1000 հոգուն 0,, իսկ 491,636 հայ տարրը տուել է 112 կամ 1000 հոգուն 0,։

Ա—Դ0.